

ՐԱՆՔ 2 հատ (թղ. 1ա. 27ա) . վերջինը յետագայ ծաղկողէ մը դժուած կ'երեւի, վասն զի ճակատի դերն եւս խոշորկեկ է եւ աննման հնազոյն գրչութեան, եւ լրացումն է ինկած թուղթի մը : ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴԻՔ ցանցառ են, նոյնպէս միազոյն, եւ որոնց մէջ գրուած են առաքելական թղթոց Ընթերցուածները : Գեղեցիկ է եւ խորհրդաւոր թղ. 197ա. առ Փիլեմոն թղթի լուսանցազարդին վրայ կանգնած դրախտահաւը, որ գլուխը յետեւ հակած՝ թեւը կը մաքրէ» (6) Եւ ծաղկողին համար կը գրէ «ԾԱՂԿՈՂ անյայտ, հաւանորէն գրիչն» :

Ծաղկողը անտարակոյս կրնանք գրելը՝ Թորոս Տարօնեցին՝ նկատել որ կերեւայ թէ 1284ին դեռ ժուժկալ եւ զգոյշ կը գորհնար միազոյն ծաղկել իր գրչութիւնը քանի մը համեստ այլ սակայն գեղեցիկ զարդերով, դեռ այդ ատենէն ցոյց տալով արուեստի տաղանդ եւ ճաշակ : Դժբախտաբար հոս ալ կը պակսի ծաղկելու իր ուսուցիչին կամ ուսուցիչներուն անունը : Երեսուն տարի վերջ երբ իրեն կը հանդիպինք ինք արդէն տաղանդաւոր եւ համբաւաւոր վարպետ մըն է :

1284-ի գրչութենէն երեսուն տարի վերջ միայն դարձեալ կը հանդիպինք 1314-ին ի Գլաձոր՝ Թորոս Տարօնեցիին : Ի՞նչ ըրած կամ ո՞ւր եղած է այդ երեսուն տարուան երկար միջոցին Թորոս : Դժբախտաբար առ այժմ մութ է մեզի : Ինչպէս որ պիտի տեսնանք, ես պահ մը կը կասկածիմ որ 1287-ին Երզնկա կամ Եկեղեցեաց զաւառի վանքերը կը դռնուէր ան : Յայտնի չէ նաեւ թէ երբ ան զնաց Վայոց Ձոր Գլաձորի վանքին համբաւաւոր դպրոցին մէջ գործելու : Հոն էին մեծանուն Մշեցի եւ Սասնեցի վարդապետներ : Գլաձորի վանահայր, ուսուցիչ եւ առաջնորդ էր Ներսէս Մշեցին : Գլաձորի այս ուսուցչապետին աշակերտն ու յաջորդը եղաւ Եսայի Նշեցի մեծանուն դիտնական վարդապետը : Ներսէս Մշեցի մեռաւ 1284-ին որուն յաջորդը Եսայի Նշեցի Սասնոյ Նիչ աւանէն էր, եւ որ նախ քան Գլաձոր անցնելը Տարօնի Առաքելոց կամ Ղազարու վանքին մէջ աշակերտած էր Ներսէս Մշեցիի որուն հետ հուսկ Գլաձոր անցաւ, Թորոս Գլաձորի մէջ կը դռնար դեռ ուրիշներ ալ որպէս Մխիթար վարդապետ Կերմանեցի կամ Սասնեցի (մեռած 1337ին), Յովհաննէս Մշեցի, Ներսէս Սասնեցի : Ասոնցմէ զատ ժամա-

6) Անդ էջ 805 :